

ՈՐՊԷՍ ՄՈՒՏՔ

Ձեռնարկելով ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ հրատարակութեան, Հայկազեան Գոլէնի Հայագիտական Ամբիոնը քայլ մը եւս առած կ'ըլլայ իր առաքելութեան նախնուն վրայ:

Կը հաւատանք մօտեւ հանդէսի մը գոյութեան անհրաժեշտութեան եւ իրաւունքին: Ինչպէս կը հաւատանք նաեւ որ կարելի է գայն ժամադրավայրը դարձնել հայագիտութեան տարբեր բնագաւառներով պարապող մեր մտաւորականներուն:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ հրատարակութիւնը վստահօրէն առաւել եւս պիտի հրահրէ հայագիտութեան հանդէպ վերջերս ցոյց տրուած հետաքրքրութիւնն ու խանդավառութիւնը, ինչպէս եւ պիտի խթանէ ունենալ՝ ձեռնարկելու նոր պրպտումներու եւ հետազոտութեանց, իրենց մասնագիտութեան գծով: Արտասահմանի մէջ ուժերը չէ որ կը պակսին, ոչ ալ միջոցները: Անկասկած որ նաեւ կը ցանկանալ հայրենի մտաւորականներու գործակցութիւնը:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ էջերը բաց կը մնան բոլոր անոնց, որոնք գիտեն գիտական հիմքերու վրայ նետուած եւ ստարկայօրէն ներկայացուած խօսքին արժէքը:

ԽՄԲ.